ՄԱՍՏԵՐ- ԿԼԱՍՍ ԱՄԵՐԻԿԱՑԻ ԼՐԱԳՐՈՂ ԴԵՅՎԻԴ ԲԼՈՍԻ ՀԵՏ

Հոկտեմբերի 27-ին ՀՖԿՍՊԻ-ի Սպորտային մանկավարժության և կառավարման ֆակուլտետի Մարզական լրագրության և շախմատի ամբիոնի նախաձեռնությամբ ամերիկացի հետաքննող լրագրող Դեյվիդ Բլոսը կհանդիպի ամբիոնի դասախոսների և ուսանողների հետ:

Դ. Բլոսը ամերիկյան լրատվամիջոցներում աշխատելու շուրջ 30 տարվա փորձ ունի, իր գործունեության տարիներին ղեկավարել է նաև Մեդիամենեջմենթի դպրոցը:

Բանախոսը ուսանողներին և գործընկեր դասախոսներին կփոխանցի իր փորձն ու ձեռքբերումները՝ անդրադառնալով հետաքննությունների իրականացման մեթոդներին ու սկզբունքներին, հետաքննական լրագրության համաշխարհային փորձին, ինչպես նաև՝ լրագրողական էթիկայի պահպանման պահանջներին: Ներկաները հնարավորություն կունենան մասնակցելու դասընթացի աշխատանքներին ինտերակտիվ քննարկումների և ելույթների միջոցով: Հանդիպումը տեղի կունենա ժամը 12.00-ին, 56 լսարանում: